ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Հայնախագիծ» ԲԲԸ տնօրեն՝
Գ. ԱՋԻՋՅԱՆ
17.07.2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔ

Մազեն Իբրահիմ Սայիդի *«Սիրիայի Դամասկոս քաղաքում փոխակերպվող (դինամիկ) ճարտարապետության ադապտացիայի խնդիրները»* թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԷ.00.01. «Ճարտարապետություն» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Թեմայի արդիականությունը: Ասպիրանտ ***Մազեն Իբրահիմ Սայիդի*** ատենախոսության թեման ուշագրավ է, քանի որ այն ներկա ժամանակաշրջանում ծառացած է պատմամշակութային ազգային ժառանգություն ունեցող բազում երկրների առջև, որոնք մտահոգված էն իրենց կենցաղավարման ազգային ավանդույթների պահպանման խնդիրներով: Որպես խնդրի հաղթահարման եղանակ, ատենախոսը ներկայացնում է Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի պատմամշակութային ու քաղաքաշինական ուրույն ժառանգության ու արդի զարգացումների միջև խորացող ճգնաժամի հաղթահարման իր տեսլականը, որի հիմքում դիտարկում է քաղաքում առկա հին բնակելի տների ավանդույթների կիրարկումը նորակառույց բնակելի շենքերի հատակագծային կառուցվածքներում:

Աշխատանքի գիտական նորույթը

- Հիմք ընդունելով գիտահետազոտական և նախագծային դրույթները առաջին անգամ՝ ատենախոսության մեջ մեթոդականորեն փաստագրվել և վերլուծվել է Դամասկոս քաղաքի պատմական բնակելի թաղամասերի, հին արաբական տների արդի վիճակը՝ քաղաքի վնասված և ապօրինի կառուցապատված միջավայրում:
- Կատարվել է Դամասկոսի պատմական և աշխարհագրական պայմանների ընդհանուր հետազոտություն, լանդշաֆտի ու քաղաքային հատակագծի

առանձնահատկությունների, կլիմայական բարենպաստության, շրջակա միջավայրի հնարավորությունների ուսումնասիրություն:

- Ներկայացվել են ավանդական տան նախագծային սկզբունքն ու դիզայնը, որը հիմնվում է չորս գաղափարների վրա՝ էսթետիկա և գեղեցկություն, պաշտպանություն և ապահովություն, բնակության հարմարավետ պայմանների ապահովում, շրջակա միջավայրի առանձնահատկությունների հաշվի առնելը: Այս մոդելն առանձնատուկ տեղ է զբաղեցնում Արաբական ճարտարապետության մեջ դարեր ի վեր, և դրա կիրառումը պետք է խրախուսվի ապագայում:
- Առաջին անգամ իրականացվել է Դամասկոսի ապօրինի ու վնասված գոտիների իրավիճակի հետազոտում և առաջադրվել դրանց վերաբերյալ միջամտության եզրակացության կազմում ու իրագործում:
- Արդի աշխարհում նորարարություն լինելով, առաջարկվող տիպի՝ փոխակերպվող կինետիկ ճարտարապետությունը շատ բարձր ինքնարժեք ունի, և որոշակի դժվարություններ կան քաղաքի ավանդական ու պատմական հատկություններին այն հարմարեցնելու տեսակետից: Ուստի, առաջին անգամ, սույն հետազոտության մեջ տրվել են այդ առնչությամբ պրակտիկ լուծումները:

<u>Աշխատանքի գործնական կիրառությունը</u>

Ներկայացվող ուսումնասիրությունն անհրաժեշտ է Դամասկոս քաղաքով զբաղվող և՛ պետական և՛ մասնավոր կառույցների, ինչպես նաև՝ քննարկվող նյութով հետաքրքրվող հետազոտողների համար: Ուսումնասիրության արդյունքները հնարավոր է ներդնել նախագծման գործընթացներում, ինչպես նաև կազմակերպել կինետիկ ու դինամիկ ճարտարապետության առարկայական դասընթացներ Սիրիայի համալսարանների ճարտարապետության տեսության և պատմության կրթական ծրագրերում, որոնք ներկայումս բացակայում են: Կենսական հարցապնդումներ են ձևակերպվել փոխակերպվող ճարտարապետության ներդրման իրական հնարավորությունների վերաբերյալ, որը շահեկան է և՛ կառավարության, և՛ հասարակության համար, որը կնպաստի երկարաժամկետ հեռանկարում ունենալ կինետիկ ու դինամիկ ճարտարապետության ավելի ցածր արժեք՝ սովորական ու ավանդական ճարտարապետության մեթոդների համեմատ: Սա ենթադրում է տեղական նյութերի օգտագործում, ինչպես նաև փոխակերպվող

ճարտարապետության ավելի բարձր աղյունավետության ապահովում՝ սովորական ու ավանդական ճարտարապետության մեթոդների համեմատ:

Ատենախոսության բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է 141 էջ տեքստային մասից, այդ թվում՝ նախաբանից, երեք գլխից՝ ամեն գլխի վերաբերյալ տրված համապատասխան եզրակացություններից, ընդհանուր եզրակացություններից, տվյալ թեմայի հետ կապված 75 անուն օգտագործված գրականության և հրատարակությունների ցանկից, ինչպես նաև՝ երեք աղյուսակներ ու 82 լուսանկարներ պարունակող հավելվածից:

Առաջին գլուխը (էջ 3-59) նվիրված է Դամասկոս քաղաքի աշխարհագրական տեղակայմանը, պատմական զարգացմանը, ճարտարապետական ու քաղաքաշինական առանձնահատկություններին, քաղաքային ընդլայնման ու թաղամասերի ձևագոյացման հարցերին, հին ավանդական արաբական տան ճարտարապետական մանրամասներին և ապօրինի ձևագոյացած տարածքներին:

Երկրորդ գլուխը (էջ 60-99) դիտարկվում է կինետիկ ու դինամիկ ճարտարապետության էությունն ու գործնական կիրառության հնարավորությունները, ձևափոխելի շինությունների տիպերի մշակումը, և այլն:

Երրորդ գլուխը (էջ 100-132) նվիրված է Դամասկոսում դինամիկ ու կինետիկ ճարտարապետության ադապտիվ համակարգի իրականացմանը, Դամասկոսի ավանդական տան նախագծային սկզբունքի ուսումնասիրման, ինչպես նաև՝ կինետիկ ճարտարապետության ինքնաբավ կայունության կիրառման հարցերին: Եզրակացություններում կատարվում է ուսումնասիրվող թեմայի ամփոփում և ընդհանրացում:

Ստացված արդյունքների և եզրակացությունների հավաստիությունը

Հեղինակի կողմից ստացված հետազոտությունների արդյունքների հավաստիությունը հաստատված է նաև գիտական ամսագրերում հրատարակված հոդվածներով և միջազգային գիտաժողովներում ու սեմինարներում կատարված զեկույցներով:

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները.

1. Ցանկալի կլիներ Ատենախոսության վերջին գլխում ներկայացված լիներ պիլոտային ծրագրի նկարագիր՝ դինամիկ ճարտարապետության կիրարկման բաղադրիչների հստակ ներկայացմամբ, իրագործելիության նկարագրով և խոշորացված ֆինանսական հաշվարկով՝ պատկերացում կազմելու մեթոդի մասսայական կիրառելիության հիմնավորվածությունը և տնտեսավետությունը:

2. Առավել արժեքավոր կլիներ նաև մոտավոր ուրվագծով պատկերել նաև Դամասկոսի համար կատարված հետազոտությամբ մշակված մեթոդաբանության ադապտացման հնարավորությունների այլ՝ հետազոտության սուբյեկտից զգալիորեն տարբերվող բնակավայրերի համար՝ որպես հաջողված և ոչ միակ բնակավայրի համար կիրառելի մեթոդաբանության կիրառումն ապահովելով այլ երկրների համար նս:

Նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը: Մազեն Իբրահիմ Սայիդի ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է, որն ունի տեսական և կիրառական նշանակության արժեքավոր արդյունքներ: Հեղինակի կողմից գիտական ամսագրերում հրատարակված հոդվածները, ինչպես նաև սեղմագիրը ամբողջովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Աշխատանքն ունի գիտամշակութային բարձր արժեք: Այն ավարտուն և արդյունավետ գիտական հետազոտություն է, որը դինամիկ և կինետիկ միջոցների ներդրմամբ կարող է գիտա-գործնական փորձարարական կիրառություն ունենալ, ոչ միայն Դամասկոսի նորակառույցներում, ձևավորելով ազգային քաղաքաշինության ուրույն և արդիական կերպար, այլև ազգային ընդհանրական կենցաղով հարուստ արաբական աշխարհի այլ բնակավայրերի քաղաքաշինական կերպարի յուրովի զարգացման գործառույթներում:

Ատենախոսությունը ձևակերպված է պատշաճ մակարդակով, հրատարակված հոդվածներն ու սեղմագիրը բավարար չափով արտացոլում են ողջ աշխատանքի նպատակներն ու բովանդակությունը:

Դատելով սեղմագրից աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Մազեն

Իբրահիմ Սայիդին արժանի է ճարտարապետական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Մազեն Իբրահիմ Սայիդի «Սիրիայի Դամասկոս քաղաքում փոխակերպվող (դինամիկ) ճարտարապետության ադապտացիայի խնդիրներրը» թեմայով ատենախոսական աշխատանքը քննարկվել է «Հայնախագիծ» ԲԲԸ-ի ընդլայնված սեմինարում, որտեղ մասնակցել են՝ կազմակերպության աշխատակիցներ՝ Հ. Սողոմոնյանը, Ս. Լազարյանը, Մ. Չերքեզյանը, Ս. Լազարյանը:

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
h1 քաղաքշինական արվեստանոցի
ղեկավար՝ Ս. ՔԱԼԱՇՅԱՆ